

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ ՈՒԲԻԿԻ

ՀՈՎԱՐԴ ԳԱՐԴՆԵՐԻ «ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ» ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ
ԱՐԴԻ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑՈՒՄ

ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

Մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ Ս.Տ. Վարդունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Լ.Թ.Ասատրյան

Մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ Ա.Լ.Մինասյան

Առաջատար կազմակերպություն՝

Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական
մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013 թ. նոյեմբերի 7-ին ժամը 14:00-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 375010, ք.Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ. հոկտեմբերի 7-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝

Ա.Սվաջյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Արդի ժամանակաշրջանում բավականին սրընթաց փոփոխության են ենթարկվում կյանքի պահանջները, որոնց բավարարման համար տեղի են ունենում հասարակական, քաղաքական, տնտեսական և այլ բնույթի փոփոխություններ: Ակնհայտ է, որ ժամանակակից կյանքի պահանջները բավարարելու համար կրթական համակարգը ևս պետք է կատարելագործվի և քայլի կյանքի զարգացման հետ համընթաց: Ուստի այն չի կարող զերծ մնալ մի շարք բարեփոխումներից և նորարարություններից:

Այսօր մանկավարժության առջև ծառայած գերխնդիրներից մեկն է՝ որոնել ու մշակել մանկավարժական գործընթացի ակտիվացման և արդյունավետության բարձրացման նոր ուղիներ: Այդ նպատակով այսօր կրթական ոլորտում ակտիվորեն ներմուծվում և կիրառվում են մի շարք նոր մանկավարժական տեխնոլոգիաներ: Ժամանակակից մանկավարժությանը հայտնի նոր մանկավարժական տեխնոլոգիաների շարքում մեծ հետաքրքրություն է ներկայացնում աշխարհում լայն տարածում գտած՝ ԱՄՆ-ի Հարվարդի Համալսարանի պրոֆեսոր Հովարդ Գարդների «Բազմաբնույթ մտածողության» տեսության (Theory of Multiple Intelligences) հիման վրա մշակված տեխնոլոգիան:

Չնայած այն հանգամանքին, որ «Բազմաբնույթ մտածողության» տեսությունը ի սկզբանե ձևավորվել է որպես հոգեբանական տեսություն, այն հաջողությամբ ներմուծվել է նաև մանկավարժության բնագավառ՝ լայն կիրառություն գտնելով ու զարգանալով նաև այս ոլորտում: Այդ է պատճառը, որ «Բազմաբնույթ մտածողության» տեսությունը մինչ օրս ուսումնասիրվել է որպես մանկավարժական գործընթացում արդյունավետ կիրառություն ունեցող հոգեբանական տեսություն: «Բազմաբնույթ մտածողության» տեսությունը վերոնշյալ տեսանկյունից է մեկնաբանել և վերլուծության ենթարկել ամերիկացի մանկավարժ, փիլիսոփա Թ.Արմսթրոնգը: «Բազմաբնույթ մտածողության» տեսության հիմնահարցերին անդրադարձել է նաև ռուս մանկավարժ Գ.Սելեվկոն:

«Բազմաբնույթ մտածողության» տեսությունը, բավականին երիտասարդ տեսություն լինելով հանդերձ, արդեն իսկ մեծ համբավ ու ճանաչում է ձեռք բերել աշխարհի շատ մանկավարժների կողմից և ակտիվորեն կիրառվում է բազմաթիվ երկրների կրթական համակարգերում: Բնական է, որ Հայաստանը չէր կարող ետ մնալ ողջ աշխարհում տեղի ունեցող գլոբալ զարգացումներից, ինչպես նաև կրթական համաշխարհային բարեփոխումները չէին կարող շրջանցել նաև Հայաստանի Հանրապետությանը: Հետևաբար «Բազմաբնույթ մտածողության» տեսությունը արագորեն ներդրվեց և սկսեց ակտիվորեն կիրառվել նաև Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում:

«Բազմաբնույթ մտածողության» տեսությունը մանկավարժական գործընթացում դիտարկելիս ալգորիթմային հստակությամբ կիրառվում են մի շարք մեթոդներ, հնարներ, տեխնիկական և այլ միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս

իրագործելու մանկավարժական բազմաթիվ նպատակներ: Այս տեսանկյունից «Բազմաբնույթ մտածողության» տեսությունը մենք դիտարկում ենք որպես մանկավարժական տեխնոլոգիա: «Բազմաբնույթ մտածողության» տեսությունը դիտարկելով որպես մանկավարժական տեխնոլոգիա՝ մենք այն դասում ենք անձնակողմնորոշիչ մանկավարժական տեխնոլոգիաների շարքին, քանի որ այն թույլ է տալիս խթանել սովորողների ինքնուրույնությունը, նրանց բնականոն զարգացումը, տալիս է ազատ մտածելու, գործելու և ընտրության լայն հնարավորություն, մղում է նրանց ինքնիրացման և այլն: «Բազմաբնույթ մտածողության» տեսությունը՝ որպես անձնակողմնորոշիչ մանկավարժական տեխնոլոգիա, միտված է բացահայտելու երեխաների ներքին հնարավորություններն ու կարողությունները և մղելու նրանց ստեղծագործական գործունեության: «Բազմաբնույթ մտածողության» տեխնոլոգիայի էությունը հանդուրժողականությունն և մարդկանց միջև տարբերությունների ընդունումն է, գիտելիքների ձեռք բերման ճանապարհների բազմազանությունը, որի շնորհիվ ամեն մարդ պահպանում է իր անհատականությունը: «Բազմաբնույթ մտածողության» տեխնոլոգիայի կիրառությունը, մասնավորապես, սկզբնական կրթության համակարգում հնարավորություն կնձեռի բացահայտելու և զարգացնելու սովորողների ողջ ներուժը և նրանց առջև բացելու ազատ մտածելու, ազատ գործելու լայն հորիզոններ:

Հետազոտության նպատակը Հովարդ Գարդների «Բազմաբնույթ մտածողության» տեսության՝ որպես կրտսեր դպրոցի ուսուցման արդյունավետությանը նպաստող մանկավարժական տեխնոլոգիայի տեղայնացումն է:

Հետազոտության օբյեկտը Հովարդ Գարդների «Բազմաբնույթ մտածողության» տեսությունն է:

Հետազոտության առարկան Հովարդ Գարդների «Բազմաբնույթ մտածողության» տեսության կիրառումն է կրտսեր դպրոցում՝ որպես մանկավարժական տեխնոլոգիա:

Հետազոտության գիտական վարկածը: «Բազմաբնույթ մտածողության» տեսությունը՝ որպես մանկավարժական տեխնոլոգիա կրտսեր դպրոցում կլինի արդյունավետ, եթե.

- Վեր հանվեն «Բազմաբնույթ մտածողության» տեսության գիտամանկավարժական հիմքերը:
- Հստակեցվի «Բազմաբնույթ մտածողության» տեսության տեխնոլոգիական կիրառումը ժամանակակից կրտսեր դպրոցում:
- Տեղայնացվի «Բազմաբնույթ մտածողության» տեսությամբ կառուցված տեխնոլոգիան կրտսեր դպրոցի մանկավարժական գործընթացում:
- Մանկավարժական դիագնոստիկայի միջոցով պարզվեն աշակերտների «մտածողության» առավել զարգացած տեսակները:

Հետազոտության խնդիրները՝

- Վերլուծել մանկավարժական տեխնոլոգիա հասկացությունը, տալ դրա ժամանակակից ընկալումները և հիմնավորել մանկավարժական տեխնոլոգիաների դերը արդի մանկավարժական գործընթացում:

- Ուսումնասիրել մանկավարժական գործընթացի արդի խնդիրների լուծմանը նվիրված մանկավարժական մի շարք անձնակողմնորոշիչ տեխնոլոգիաներ:
- Հովարդ Գարդների «Բազմաբնույթ մտածողության» տեսությունը դիտարկել և կիրառել՝ որպես անձնակողմնորոշիչ մանկավարժական տեխնոլոգիա:
- Գիտափորձով հավաստել «Բազմաբնույթ մտածողության» տեխնոլոգիայի արդյունավետությունը արդի կրտսեր դպրոցում:

Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել մանկավարժության մի շարք տեսություններ, ինչպես նաև հումանիստական մանկավարժության ու հոգեբանության վերաբերյալ գաղափարներ /Շ.Ամոնաշվիլի, Գ.Գուրջիև, Ռ.Շտայներ և ուրիշներ/: Հետազոտության համար հիմք են ընդունվել մանկավարժական գործընթացում տարբեր տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ գիտական մոտեցումներն ու ուսումնասիրությունները (Մ.Մախմուտով, Վ.Կուկուշին, Մ.Գալագուզովա, Գ.Սելեվկո, Գ.Քսենզովա, Ս.Մուխինա, Ն.Շչուրկովա, Ա.Կոլեչենկո և ուրիշներ):

Աշխատանքի տեսական հիմքը ամերիկացի մանկավարժ Հովարդ Գարդների «Բազմաբնույթ մտածողության» տեսությունն է:

Հետազոտության մեթոդները: Հետազոտության խնդիրները լուծելու նպատակով ուսումնասիրություններ կատարելու ընթացքում կիրառվել են հետևյալ գիտահետազոտական մեթոդները.

- վերլուծվել և ընդհանրացվել են մանկավարժական առաջավոր փորձի վերաբերյալ աշխատությունները,
- իրականացվել է զրույցի մեթոդը,
- իրականացվել է դիտման մեթոդը,
- ուսումնասիրվել են սովորողների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքները,
- ուսումնասիրվել են դպրոցական փաստաթղթերը,
- կատարվել է սովորողների անկետավորում,
- իրականացվել է դիագնոստիկ տվյալների վերլուծություն,
- անցկացվել է մանկավարժական գիտափորձի մեթոդը,
- կիրառվել է հետազոտությունների արդյունքների ներկայացման մաթեմատիկական մեթոդները /արձանագրում, սանդղակի կազում/:

Հետազոտության գիտական նորույթը:

- «Բազմաբնույթ մտածողության» տեսությունը դիտարկվել և կիրառվել է որպես անձնակողմնորոշիչ մանկավարժական տեխնոլոգիա:
- Գիտափորձով հիմնավորվել է «Բազմաբնույթ մտածողության» տեսության կիրառության արդյունավետությունը կրտսեր դպրոցի մանկավարժական գործընթացում:
- Մշակվել են աշակերտների «մտածողության» տեսակների բացահայտման դիագնոստիկ միջոցներ:

- Գիտափորձով հիմնավորվել է մեր կողմից մշակված դիագնոստիկ միջոցների կիրառման նպատակահարմարությունը մանկավարժական գործընթացի արդյունավետության բարձրացման գործում:

Հետազոտության տեսական նշանակությունն այն է, որ վերլուծվել և դասակարգվել են մանկավարժական տեխնոլոգիաները: «Բազմաբնույթ մտածողության» տեսությունը ենթարկվել է տեսական վերլուծության և դիտարկվել որպես անձնակողմնորոշիչ մանկավարժական տեխնոլոգիա:

Մշակված դրույթները զգալի ներդրում կկատարեն մանկավարժության տեսության մեջ և օգտակար կլինեն մանկավարժական տեխնոլոգիաների տեսական վերլուծություններ կատարողների համար:

Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ գիտափորձով ստուգված արդյունքները կարող են օգտակար լինել ուսուցիչների համար մանկավարժական գործընթացը բարելավելու նպատակով:

Մեր կողմից մշակված դիագնոստիկ միջոցները կարող են օգտագործվել «Բազմաբնույթ մտածողության» տեխնոլոգիան կիրառող մանկավարժների կողմից՝ աշակերների ուսումնական գործունեության արդյունավետության բացահայտման համար:

Աշխատանքի արդյունքները կարող են կիրառվել մանկավարժության տարբեր ոլորտներում:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

- Ժամանակակից մանկավարժական գործընթացում կիրառվող մանկավարժական տեխնոլոգիաները նպաստում են դրա արդյունավետության բարձրացմանը: Մանկավարժական տեխնոլոգիաները ենթարկվում են որոշակի դասակարգման և դրանց շարքերն օրեցօր հարստանում են:
- Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները նպաստում են կրտսեր դպրոցի մանկավարժական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:
- Հովարդ Գարդների «Բազմաբնույթ մտածողության» տեսությունը դիտարկվում է որպես ժամանակակից հեղինակային, անձնակողմնորոշիչ մանկավարժական տեխնոլոգիա, որը տեղայնացնելով ժամանակակից կրտսեր դպրոցում, կարող է նպաստել մանկավարժական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Հետազոտության արդյունքների հավաստիությունը և հիմնավորվածությունն ապահովվում է հետազոտական նյութի վերլուծությամբ, որի համար կիրառվել են հետազոտության նպատակներին համարժեք համալիր մեթոդներ, հետազոտության արդյունքների մաթեմատիկական մշակումներ:

Հետազոտության արդյունքների փորձարկումն ու ներդրումը:

Տեսական ուսումնասիրությունների արդյունքները գիտափորձով ներդրվել են Երևանի Լեոյի անվան թիվ 65 և Վայոց Ձոր մարզի Ջերմուկ քաղաքի թիվ 2 դպրոցներում:

Ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտությունների արդյունքները քննարկվել են մի շարք՝ ներբուհական, միջբուհական և միջազգային մասնագիտական գիտաժողովներում:

Հետազոտության փուլերն են.

- 2002-2005թ.՝ անհրաժեշտ գիտամանկավարժական գրականության, պարբերական մամուլի, համացանցային նյութերի ուսումնասիրություն,
- 2005-2008թ.՝ կատարած ուսումնասիրությունների արդյունքների վերլուծություն,
- 2008-2009թ.՝ ատենախոսության շրջանակներում փորձարարական աշխատանքների իրականացում,
- 2009-2010թ.՝ տարբեր ուսումնասիրությունների արդյունքների, կատարված փորձարարական աշխատանքների վերլուծության և ընդհանրացման հիման վրա աշխատանքի շարադրում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործած գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ընդհանուր ծավալն է 163 համակարգչային էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Պաշտպանությանը ներկայացվող ատենախոսության **ներածության** մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունն ու հրատապությունը, սահմանվել են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, բացահայտվել են հետազոտության գիտական նորույթը, պաշտպանության ներայացվող դրույթները, մեկնաբանվել են հետազոտության տեսական և գործնական նշանակությունները, ձևակերպվել է հետազոտության գիտական վարկածը, մեթոդաբանական հիմքերը, ուսումնասիրության մեթոդները, փորձարարական հիմքերը և ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության **«Մանկավարժական տեխնոլոգիաների դերը ժամանակակից մանկավարժության մեջ»** խորգարով առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին՝ **«Մանկավարժական տեխնոլոգիա հասկացությունը»** ենթագլխում մանրամասն մեկնաբանել ենք մանկավարժական տեխնոլոգիա հասկացությունը, ներկայացրել ենք մանկավարժական տեխնոլոգիաների ծագումն ու զարգացումը:

Ժամանակակից հայրենական և արևմտյան մանկավարժության մեջ դեռևս չի ձևավորվել մանկավարժական տեխնոլոգիա տերմինի միանշանակ ընկալում: Այսօր էլ մանկավարժության մեջ տրվում են *դ* *ր* *ա* տարբեր մեկնաբանություններ: Դրանից ելնելով հետազոտության մեջ մենք բազմակողմանի ուսումնասիրել և վերլուծել ենք ժամանակակից մանկավարժության մեջ ընդունված մանկավարժական տեխնոլոգիա հասկացության տարբեր մեկնաբանություններ: Դիտարկել ենք նաև ուսուցման տեխնոլոգիա, դաստիարակության տեխնոլոգիա, մանկավարժական տեխնոլոգիա և կրթական տեխնոլոգիա հասկացությունները:

Մեր հետազոտությունները ցույց տվեցին, որ մանկավարժական տեխնոլոգիան խիստ նախագծված մանկավարժական ներգործությունների համակարգ է, որն ուղղված է մանկավարժական կոնկրետ նպատակների իրականացմանը: Այն

մանկավարժական մեթոդների, հնարների, գործողությունների խիստ գիտական նախագծում և իրականացում է, որոնց պետք է տիրապետի մանկավարժը: Սակայն մանկավարժական տեխնոլոգիան մեթոդների, հնարների սուկ մեխանիկական հանրագումար չէ, այլ դրանց համակարգված, համալիր, ամբողջական և նպատակային կիրառությունն է: Այն մի գործընթաց է, որն ունի նաև հետևյալ բնորոշ առանձնահատկությունները՝ մանկավարժական գործընթացի սկզբնական և վերջնական արդյունքների ու նպատակների դիագնոստիկա, աշխատանքի արդյունքների կանխատեսելիություն, հնարների ու գործողությունների խիստ հաջորդականություն, մանկավարժական գործընթացի ղեկավարման հնարավորություն:

«Մանկավարժության մեջ կիրառվող ոչ հեղինակային տեխնոլոգիաները» խորագրով երկրորդ ենթաալիսում ուսումնասիրել և ներկայացրել ենք ժամանակակից մանկավարժության մեջ կիրառվող հետևյալ մանկավարժական ոչ հեղինակային տեխնոլոգիաները՝ ուսուցման ավանդական (ռեպրոդուկտիվ) տեխնոլոգիա, զարգացնող ուսուցման տեխնոլոգիա, նախագծային ուսուցման տեխնոլոգիա, պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիա, ծրագրավորված ուսուցման տեխնոլոգիա, քննադատական մտածողության տեխնոլոգիա, խաղային ուսուցման տեխնոլոգիա և համագործակցային ուսուցման տեխնոլոգիա:

Նշված տեխնոլոգիաները ենթարկվել են նաև համեմատական վերլուծության «Բազմաբնույթ մտածողության» տեխնոլոգիայի հետ՝ նպատակ ունենալով բացահայտել «Բազմաբնույթ մտածողության» տեսության տեխնոլոգիական կիրառման հնարավորությունները և դրա ադյունավետությունը:

Նշված մանկավարժական ոչ հեղինակային տեխնոլոգիաները ուսումնասիրվել են սկզբնական կրթության համակարգում կիրառելիության տեսանկյունից: Դրանց գրեթե բոլորի կիրառման արդյունքում արմատական փոփոխությունների է ենթարկված կրտսեր դպրոցականի նկատմամբ վերաբերմունքը, նրա ընկալումը: Ակտիվացնելով աշակերտին՝ մենք ոչ թե պասսիվացնում ենք ուսուցչին, այլ տեսնում ենք նրան ուղղորդողի, խորհրդատուի դերում: Այսօրվա ակտիվ դիրքորոշում ունեցող աշակերտը՝ վաղվա ակտիվ քաղաքացին է, ով հնարավորություն ունի վերոփոխել իրենց շրջապատող աշխարհը՝ նպաստելով հասարակական զարգացումներին:

Ժամանակակից դպրոցը գտնվում է բարեփոխումների փուլում: Սկզբնական կրթության համակարգում կատարվող բարեփոխումները կապված են դպրոցականի նոր կարգավիճակի՝ մանկավարժական գործընթացի սուբյեկտի հետ: Ժամանակակից մանկավարժության համար նպատակ է ազատ, ակտիվ, սեփական անձը հարգող մարդու դաստիարակումը: Դրա համար բավական չեն մեթոդներն ու միջոցները, այլ կարևոր է երեխայի նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքը: Ուստի այսօր մանկավարժության մեջ սկսել են ակտիվ կիրառություն գտնել մի շարք անձնակողմնորոշիչ տեխնոլոգիաներ: Անձնակողմնորոշիչ սկզբունքներով կազմակերպված մանկավարժական գործընթացում երեխան «Ես պետք է» վիճակից անցում է կատարում դեպի «Ես ուզում եմ» վիճակի:

«Մանկավարժության մեջ կիրառվող հեղինակային անձնակողմնորոշիչ տեխնոլոգիաները» խորագրով երրորդ ենթաալիսում մանրամասն ուսումնասիրել և

վերլուծել ենք ենք մանկավարժական հեղինակային անձնակողմնորոշիչ տեխնոլոգիաները: Հեղինակային տեխնոլոգիաները մանկավարժի հոգեբանամանկավարժական դիրքորոշումներն են և մեթոդական հնարները, որոնք տարբերվում են իրենց յուրօրինակությամբ, համապատասխանում են մանկավարժի անձնական փորձին և ընդհանուր ծրագրին:

Նշված ենթազվխում մենք մանրամասն ներկայացրել ենք այն հեղինակային տեխնոլոգիաները, որոնք իրենց բովանդակությամբ, գործառույթներով, սկզբունքներով հարում են Հ.Գարդների «Բազմաբնույթ մտածողության» տեսությանը, ունեն անձնակողմնորոշիչ տեխնոլոգիաներին բնութագրող առանձնահատկություններ, ինչը կօգնի գիտամանկավարժական տեսանկյունից լիարժեք վերլուծության ենթարկել «Բազմաբնույթ մտածողության» տեխնոլոգիան: Այդ նպատակով մենք ուսումնասիրել և ներկայացրել ենք Շ. Ամոնաշվիլու, Գ.Գուրջիևի, Ռ.Շտայների, Ս.Ֆրենեի, Ա.Ռիվինի, Մ. Մոնտեսորիի և Ե.Պարկիսեստի մանկավարժական տեխնոլոգիաները:

Անձնային կողմնորոշում ունեցող հեղինակային մանկավարժական տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս էապես փոփոխել ավանդական մանկավարժական գործընթացը, այն հարստացնել ուսուցիչ-աշակերտ համագործացության նոր ձևերով, նպաստել հումանիստական մանկավարժության սկզբունքների իրագործմանը ժամանակակից մանկավարժական գործընթացում: Եվ հենց վերը նվշած անձնային կողմնորոշում ունեցող հեղինակային մանկավարժական տեխնոլոգիաները հիմք են ծառայել 20-րդ դարի երկրորդ կեսին ծնունդ առած «Բազմաբնույթ մտածողության» տեսությանը՝ կազմելով նրա մեթոդաբանական հիմքը:

Ատենախոսության «Հովարդ Գարդների «Բազմաբնույթ մտածողության» տեսությունը որպես ժամանակակից մանկավարժական խնդիրների լուծմանն ուղղված արդյունավետ տեխնոլոգիա» խորագրով երկրորդ գլուխը բաղկացած է երկու ենթազվխներից:

Առաջին՝ **««Բազմաբնույթ մտածողության» տեսությունը որպես հոգեբանամանկավարժական տեսություն»** ենթազվխում ներկայացրել ենք «Բազմաբնույթ մտածողության» տեսությունը՝ նախևառաջ որպես 1983 թվականին ձևավորված հոգեբանական տեսություն: Հանգամանորեն ներկայացրել ենք տեսության հեղինակի՝ Հովարդ Գարդների կողմից առանձնացված «մտածողության» յոթ հիմնական տեսակները: Դրանք են՝

1. **Լեզվական «մտածողություն»**
2. **Տրամաբանական-մաթեմատիկական «մտածողություն»**
3. **Տեսողական-տարածական «մտածողություն»**
4. **Մարմնաշարժողական «մտածողություն»**
5. **Երաժշտական «մտածողություն»**
6. **Միջանձնային «մտածողություն»**
7. **Ներանձնային «մտածողություն»**

Հ.Գարդների կողմից առաջարկված «մտածողության» յոթ հիմնական տեսակները բավականին ընդգրկում են ու համալիր: Դրանք լիովին բնութագրում են մարդու ողջ

ներուժն ու ներքին բոլոր հնարավորություններն զանազան խնդիրներ լուծելու կարողությունները, որոնք իրենց արտահայտությունը պետք է գտնեն մարդու հետագա կյանքում:

Մեր ուսումնասիրությունների արդյունքում հանգեցինք նրան, որ Հ.Գարդնեի «Բազմաբնույթ մտածողության» տեսությունը ծնունդ է առել հումանիստական մանկավարժության աղբյուրներից: Այն իր բնույթով անձնակողմնորոշիչ տեսություն է, քանի որ հաշվի է առնում յուրաքանչյուր մարդու բնատուր առանձնահատկությունները, մտածելու և գործելու կերպը, տալիս է նրանց ազատ արտահայտման, ինքնադրսևորման հնարավորություն, խրախուսում է նրանց յուրօրինակությունն ու անհատականությունը:

«Բազմաբնույթ մտածողության» տեսությունը որպես ուսուցման արդյունավետ անձնակողմնորոշիչ տեխնոլոգիա կրտսեր դպրոցում» խորագրով երկրորդ ենթազխում դիտարկել ենք «Բազմաբնույթ մտածողության» տեսությունը որպես մանկավարժական տեխնոլոգիա:

«Բազմաբնույթ մտածողության» տեսությունը, ձևավորվելով որպես հոգեբանական տեսություն, արդյունավետորեն կիրառվում է նաև մանկավարժության մեջ: Այն ճանաչվել և ընդունվել է աշխարհի շատ մանկավարժների կողմից ու արդյունավետորեն կիրառվում է մի շարք երկրների կրթական համակարգերում:

Այս ենթազխում մենք համեմատական վերլուծության ենք ենթարկել ավանդական դասի մոդելն ու «Բազմաբնույթ մտածողության» տեսությամբ կառուցված դասի մոդելը: Վերլուծության արդյունքում հանգել ենք նրան, որ «Բազմաբնույթ մտածողության» տեսությամբ կառուցված դասերը առավելապես են հարմարեցվում սովորողների բազմապիսի ընդունակություններին: Այդ դասերը ինտերակտիվ են, հետաքրքիր, հարուստ ստեղծագործական մթնոլորտով, աշակերտին ընձեռում են ինքնադրսևորման լայն հնարավորություններ: Տարբեր երեխաների պետք է սովորեցնել տարբեր կերպ, քանի որ ամեն երեխա յուրովի է տեսնում ու ընկալում աշխարհը:

«Բազմաբնույթ մտածողության» տեսությունը մանկավարժական գործընթացում դիտարկելիս ալգորիթմային հստակությամբ կիրառվում են մի շարք մեթոդներ, հնարներ, տեխնիկական և այլ միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս իրագործելու մանկավարժի առջև դրված կոնկրետ նպատակներ: Այս տեսանկյունից «Բազմաբնույթ մտածողության» տեսությունը մենք դիտարկում ենք որպես տեխնոլոգիա: Այդ իսկ պատճառով մենք մանրամասն վերլուծությունների արդյունքում տվել ենք «Բազմաբնույթ մտածողության» տեսության՝ որպես տեխնոլոգիայի հետևյալ բնութագիրը.

Տեխնոլոգիայի անվանումը: «Բազմաբնույթ մտածողության» տեխնոլոգիա:

Տեխնոլոգիայի նպատակները:

- Նպաստել սովորողների ներքին հնարավորությունների բացահայտմանն ու զարգացմանը:
- Բացահայտել սովորողների «մտածողության» առավել զարգացած տեսակները:
- Հիմնվելով սովորողների առավել զարգացած «մտածողության» տեսակների վրա՝ զարգացնել նաև մյուսները:

- Ստեղծել սովորելու համար հարմարավետ, մատչելի և բարենպաստ պայմաններ բոլորի համար:
- Սովորողների գիտելիքները դարձնել առավել գործնական և կիրառելի:
- Ջարգացնել սովորողների ինքնուրույն սովորելու կարողությունը:
- Ջարգացնել սովորողների վերլուծական միտքը և ստեղծագործական մտածողությունը:
- Ձևավորել հաղորդակցական կարողություններ և նպաստել բարենպաստ բարոյահոգեբանական և զարգացնող միջավայրի հաստատմանը:

Տեխնոլոգիայի կառուցվածքը:

- Սովորողների նախնական դիագնոստիկա,
- Տեխնոլոգիայի կիրառման բուն ընթացք,
- Սովորողների ավարտական դիագնոստիկա,
- Արդյունքների հաշվառում և թերությունների շտկում:

Ուսումնամեթոդական համալրվածությունը: «Բազմաբնույթ մտածողության»

տեխնոլոգիայի կիրառման ժամանակ հիմնվում են ուսումնական պլանների, ժրագրերի, առարկայական դասագրքերի և ուսումնասօժանդակ ձեռնարկների վրա: Կիրառվում են տեխնիկական բազմաթիվ միջոցներ, զննական պարագաներ, որոնք նպաստում են «մտածողության» տեսակների բացահայտմանն ու զարգացմանը և մանկավարժական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Բնականաբար, «Բազմաբնույթ մտածողության» տեխնոլոգիան չի կարելի ընկալել որպես կթական բոլոր հարցերի լուծման միակ և ունիվերսալ եղանակ: Այն պետք է ընկալել որպես շատ օգտակար ուսուցման մի ձև, որը չի կարող լինել պարտադրող և այն հիմնված չէ մեխանիկական կրկնողության վրա: «Բազմաբնույթ մտածողության» տեխնոլոգիան փորձ է անում ի հայտ բերել մարդուն հատուկ ընկալման, «մտածողության» ձևերը և դրանց համապատասխան կառուցել ուսուցման գործընթացը:

Այսպիսով, «Բազմաբնույթ մտածողության» տեխնոլոգիան մանկավարժական տեխնոլոգիա է, որը ապահովում է ժամանակակից մանկավարժական գործընթացի արդյունավետությունը: «Բազմաբնույթ մտածողությամբ» կառուցված դասը նպաստում է աշակետների ակտիվության ապահովմանը՝ պահպանելով ուսումնական ծանրաբեռնվածությունը, կիրառելով կանխարգելիչ միջոցառումներ, որոնք բացասական ներգործություն չեն ունենում երեխաների առողջության վրա:

Հարկ է նշել, որ «Բազմաբնույթ մտածողության» տեխնոլոգիայի կիրառումը սկզբնական կրթության համակարգում մեծ հնարավորություններ է ստեղծում կրտսեր դպրոցականի համար սիրելի դպրոցը, ուսումը, վերաբերվել վերջինիս՝ որպես հաճելի գործունեության տեսակի, և ոչ թե որպես հոգեկան և ֆիզիկական դժվարություններ ստեղծող գործընթացի:

Ատենախոսության «**«Բազմաբնույթ մտածողության» տեխնոլոգիայի կիրառման արդյունքները և արդյունավետության պայմանները ժամանակակից կրտսեր դպրոցում**» խորագարով երրորդ գլուխը բաղկացած է մեկ ենթագլուխից: Այն է՝ **«Կրտսեր դպրոցում «Բազմաբնույթ մտածողության» տեխնոլոգիայի**

արդյունավետությունը հավաստող մանկավարժական գիտափորձ»:

Մեր հանրապետությունում բոլոր ոլորտներում տեղի են ունենում տարբեր համակարգային փոփոխություններ, որոնք պայմանավորված են ինչպես համաշխարհային զարգացումներով, այնպես էլ ազգային առանձնահատկություններով: Իսկ դրա արդյունավետ լուծման համար պետք է վերանայել ուսուցման ավանդական մոտեցումները և մշակել նոր ռազմավարություն: Վերոհիշյալ նպատակների առավել արդյունավետ լուծմանն ու իրագործմանն է միտված Հ.Գարդների «Բազմաբնույթ մտածողության» տեխնոլոգիան, որի օգնությամբ ուսումնական գործընթացը դառնում է ավելի մատչելի, հասու, հետաքրքիր և համապատասխան յուրաքանչյուր սովորողի ներքին հնարավորություններին ու կարողություններին:

Մեզ համար առավել հետաքրքրական է «Բազմաբնույթ մտածողության» տեխնոլոգիայի կիրառման հնարավորությունները հատկապես սկզբնական կրթության համակարգում, ուստի այս ենթազվխում մեր բոլոր դիտարկումները վերաբերում են կրթության հենց այս աստիճանին:

«Բազմաբնույթ մտածողության» տեխնոլոգիայի արդյունավետության մեջ համոզվելու համար մենք իրականացրել ենք մանկավարժական գիտափորձ Հայաստանի Հանրապետության երկու դպրոցներում՝ Երևանի Լեոյի անվան թիվ 65 և Վայոց Ձոր մարզի Ջերմուկ քաղաքի թիվ 2 դպրոցներում: Ատենախոսության շրջանակներում կատարված մանկավարժական գիտափորձը իրականացվել է 2008-2009 ուումնական տարվա ընթացքում: Գիտափորձը իրականացնելու համար ընտրվել են համապատասխան ստուգողական և փորձարարական դասարաններ:


Վերոնշյալ մանկավարժական գիտափորձը իրականացվել է հաշվի առնելով հետևյալը՝

1. Գիտափորձի իրականացման նպատակն է պարզել սկզբնական կրթության համակարգում «Բազմաբնույթ մտածողության» տեխնոլոգիայի տեղայնացման հնարավորությունները և արդյունավետության աստիճանը:
2. Հետազոտությանը մասնակից դասարանները միևնույն տարիքային խմբի են /2-րդ դասարան/:
3. Հետազոտությանը մասնակից դասարաններում աշակերտների քանակը գրեթե հավասար են /Վայոց Ձոր մարզի Ջերմուկ քաղաքի թիվ 2 դպրոցի ստուգողական դասարան՝ 25 և փորձարարական դասարան՝ 24 աշակերտ: Երևանի թիվ 65 դպրոցի ստուգողական դասարան՝ 22 և փորձարարական դասարան՝ 24 աշակերտ/:
4. Հետազոտությանը մասնակից դասարանների աշակերտներն ունեն զարգացվածության գրեթե միևնույն մակարդակը:
5. Գիտափորձն իրականացվել է միևնույն առարկաների շրջանակներում /մայրենի լեզու և մաթեմատիկա/:
6. Գիտափորձն իրականացվել է ՀՀ Կրթակարգի առարկայական չափորոշիչների հիման վրա՝ ստուգելու համար սովորողների.
 - Գիտելիքների համակարգը,
 - Ճանաչողական կարողություններն ու հմտությունները,


- Ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները,
 - Համագործակցային կարողություններն ու հմտությունները,
 - Հաղորդակցական կարողություններն ու հմտությունները,
 - Ստեղծագործական կարողություններն ու հմտությունները,
 - Արժեքային համակարգը:
7. Գիտափորձից առաջ և ստուգողական, և փորձարարական դասարաններում նախապես իրականացվել է մանկավարժական դիագնոստիկա՝ նախապես մշակված հարցաթերթիկների օգնությամբ: Մանկավարժական դիագնոստիկայի նպատակն է պարզել, թե սովորողների «մտածողության» որ տեսակներն են առավել զարգացած:
 8. Գիտափորձի վերջում ևս կատարվել է դիագնոստիկա, որը հնարավորություն է տվել պարզել, թե յուրաքանչյուր դասարանում տվյալ ժամանակահատվածում /մեկ ուսումնական տարի/ իրականացված մանկավարժական գործունեության արդյունքում որքանով են փոփոխության ենթարկվել սովորողների առավել զարգացած «մտածողության» տեսակները և որքանով են զարգացել «մտածողության» մյուս տեսակները:
 9. Հետազոտվող դասարաններում մանկավարժական գիտափորձը չափվել է միևնույն հարցաթերթիկների հիման վրա:

Վայոց Ձոր մարզի Զերմուկ քաղաքի թիվ 2 դպրոցում կատարված մանկավարժական գիտափորձի շրջանակներում ստուգողական և փորձարարական դասարաններում իրականացրել ենք նախնական դիագնոստիկա՝ ստանալով հետևյալ արդյունքները՝

Գծապատկեր 1
Նախնական դիագնոստիկայի համեմատական դիագրամ
 /Զերմուկի թիվ 2 դպրոց, ստուգողական դասարան, %- ներով/




Գծապատկեր 2
Նախնական դիագնոստիկայի համեմատական դիագրամ
 /Ջերմուկի թիվ 2 դպրոց, փորձարարական դասարան, %- ներով/




Մանկավարժական գիտափորձի ավարտին արդյունքները չափելու նպատակով իրականացրել ենք ավարտական դիագնոստիկա ինչպես ստուգողական, այնպես էլ փորձարարական դասարաններում:

Գծապատկեր 3
Ավարտական դիագնոստիկայի համեմատական դիագրամ
 /Ջերմուկի թիվ 2 դպրոց, ստուգողական դասարան, %- ներով/



Գծապատկեր 4
Ավարտական դիագնոստիկայի համեմատական դիագրամ
 /Ջերմուկի թիվ 2 դպրոց, փորձարարական դասարան, %- ներով/



Գիտափորձի շրջանակներում իրականացված նախնական և ավարտական դիագնոստիկաների միջև իրականացվել է համամետական վերլուծություն՝ պարզելու համար, թե ուսումնասիրվող երկու դասարաններում գիտափորձի սկզբից մինչև ավարտը կրտսեր դպրոցականների «մտածողության» տեսակները զարգացման ինչ դինամիկա են ունեցել: Կատարված համեմատական վերլուծության արդյունքում պարզեցինք՝

Ստուգողական դասարան

- լեզվական «մտածողություն»՝ աճ 10 %-ով /80%-ից 90%/,
- մաթեմատիկական «մտածողություն»՝ աճ 10 %-ով /60%-ից-70%/,
- տարածական «մտածողություն»՝ աճ չի գրանցել /50%/,
- երաժշտական «մտածողություն»՝ աճ չի գրանցել /30%/,
- մարմնաշարժողական «մտածողություն»՝ աճ չի գրանցել /20%/,
- միջանձնային «մտածողություն»՝ աճ չի գրանցել /30%/
- ներանձնային «մտածողություն»՝ աճ 10 %-ով /40%-ից 50%/


Փորձարարական դասարան

- լեզվական «մտածողություն»՝ աճ 10 %-ով /70%-ից 80%/,
- մաթեմատիկական «մտածողություն»՝ աճ 10 %-ով /60%-ից-70%/,
- տարածական «մտածողություն»՝ աճ 20 %-ով /50%-ից-70%/,
- երաժշտական «մտածողություն»՝ աճ 10 %-ով /40%-ից - 50% /,
- մարմնաշարժողական «մտածողություն»՝ աճ 20 %-ով /30%-ից - 50%/,
- միջանձնային «մտածողություն»՝ աճ 30 %-ով /30%-ից- 60%/,
- ներանձնային «մտածողություն»՝ աճ 10 %-ով /40%-ից 50%/


Երևանի Լեոյի անվան թիվ 65 դպրոցում կատարված մանկավարժական գիտափորձի շրջանակներում ստուգողական և փորձարարական դասարաններում իրականացված նախնական դիագնոստիկան ցույց տվեց հետևյալը՝

Գծապատկեր 5

Նախնական դիագնոստիկայի համեմատական դիագրամ /Երևանի թիվ 65 դպրոց, ստուգողական դասարան, %- ներով /




Գծապատկեր 6
Նախնական դիագնոստիկայի համեմատական դիագրամ
 /Երևանի թիվ 65 դպրոց, փորձարարական դասարան, %- ներով/




Երևանի Լեոյի անվան թիվ 65 դպրոցում իրականացված **ավարտական դիագնոստիկայի** արդյունքները հետևյալն են՝

Գծապատկեր 7
Ավարտական դիագնոստիկայի համեմատական դիագրամ
 /Երևանի թիվ 65 դպրոց, ստուգողական դասարան, %- ներով/



Գծապատկեր 8
Ավարտական դիագնոստիկայի համեմատական դիագրամ
 /Երևանի թիվ 65 դպրոց, փորձարարական դասարան, %- ներով/



Նախնական և ավարտական դիագնոստիկաների միջև այստեղ ևս իրականացվել է համամետական վերլուծություն՝ պարզելու համար գիտափորձի սկզբից մինչև ավարտը կրտսեր դպրոցականների «մտածողության» տեսակների զարգացման դինամիկան:

Ստուգողական դասարան

- լեզվական «մտածողություն»՝ աճ 20 %-ով /70%-ից 90%/,
- մաթեմատիկական «մտածողություն»՝ աճ 10 %-ով /70%-ից-80%/,
- տարածական «մտածողություն»՝ աճ 10 %-ով /40-ից- 50%/,
- երաժշտական «մտածողություն»՝ աճ 10 %-ով /30%-ից-40%/,
- մարմնաշարժողական «մտածողություն»՝ աճ 10 %-ով /10%-ից-20%/,
- միջանձնային «մտածողություն»՝ աճ չի գրանցել /30%/
- ներանձնային «մտածողություն»՝ աճ 10 %-ով /40%-ից -50%/

Փորձարարական դասարան

- լեզվական «մտածողություն»՝ աճ 30 %-ով /60%-ից 90%/,
- մաթեմատիկական «մտածողություն»՝ աճ 30 %-ով /60%-ից 90%/,
- տարածական «մտածողություն»՝ աճ 40 %-ով /30%-ից-70%/,
- երաժշտական «մտածողություն»՝ աճ 20 %-ով /30%-ից - 50% /,
- մարմնաշարժողական «մտածողություն»՝ աճ 40 %-ով /20%-ից - 60%/,
- միջանձնային «մտածողություն»՝ աճ 40 %-ով /20%-ից - 60%/,
- ներանձնային «մտածողություն»՝ աճ 20 %-ով /40%-ից - 60%/

Ուսումնասիրվող յուրաքանչյուր դպրոցում մեր կողմից իրականացրած մանկավարժական գիտափորձի և արդյունքների համալիր վերլուծության արդյունքում մենք համոզվեցինք, որ «Բազմաբնույթ մտածողության» տեխնոլոգիայն նպաստում է կրտսեր դպրոցի մանկավարժական գործընթացի արդյունավետության բարձրացմանը, եթե պահպանվում են հետևյալ պայմանները՝ ա/ իրականացվում է նախնական դիագնոստիկա և պարզվում են երեխաների ընդգծված «մտածողության» տեսակները, բ/ աշխատանքներ են տարվում «մտածողության» բոլոր տեսակների զարգացման ուղղությամբ:

Հետազոտության արդյունքների վերլուծության հիման վրա արվել են հետևյալ եզրակացությունները.

1. Հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ մանկավարժական տեխնոլոգիա հասկացությունը ժամանակակից գրականության մեջ օգտագործվում է լայն իմաստով՝ նկատի ունենալով ինչպես մանկավարժական գործընթացում տեխնիկական և տեղեկատվական միջոցների կիրառություն, այնպես էլ տեխնոլոգիապես մշակված կրթական համակարգ, տրամաբանված, պլանավորված և նպատակաուղղված քայլերի, ուսուցման և դաստիարակության մեթոդների, հնարների համախումբ, որոնք միտված են մանկավարժական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

2. Այսօր ողջ աշխարհում տեղի է ունենում կրթական նոր համակարգի կայացման գործընթաց, որն ուղղված է համաշխարհային ընդհանուր կրթական դաշտ ստեղծելու գաղափարին: Այդ գործընթացն ուղղորդվում է ինչպես մանկավարժության տեսության, այնպես էլ մանկավարժական գործընթացի պրակտիկ դաշտում բազմաթիվ նորարարական փոփոխություններով, նոր հեղինակային դպրոցների և հեղինակային տեխնոլոգիաների ներդրմամբ ու կիրառմամբ:
3. «Բազմաբնույթ մտածողության» տեսությունը դիտարկվում է որպես մանկավարժական տեխնոլոգիա, որն ապահովում է ժամանակակից մանկավարժական գործընթացի արդյունավետությունը:
4. Հ.Գարդների «Բազմաբնույթ մտածողության» տեխնոլոգիան իր բնույթով անձնակողմնորոշիչ տեխնոլոգիա է, քանի որ հաշվի է առնում յուրաքանչյուր մարդու բնատուր առանձնահատկությունները, մտածելու և գործելու կերպը, տալիս է նրանց ազատ արտահայտման և ազատ գործելու հնարավորություն, խրախուսում է նրանց յուրօրինակությունն ու անհատականությունը:
5. Փորձարարական աշխատանքների արդյունքում պարզ դարձավ, որ «Բազմաբնույթ մտածողության» տեխնոլոգիայի կիրառությունը սկզբնական կրթության համակարգում հնարավորություն է տալիս մանկավարժական գործընթացը դարձնել առավել ակտիվ, մատչելի և հասու յուրաքանչյուր սովորողի համար:
6. «Բազմաբնույթ մտածողության» տեխնոլոգիայի կիրառումը ժամանակակից կրտսեր դպրոցի մանկավարժական գործընթացում առավել արդյունավետ է մանկավարժական դիագնոստիկայի զուգակցման պայմաններում, որը հնարավորություն կտա բացահայտել նրանց «մտածողության» տեսակները:
7. Հ.Գարդների «Բազմաբնույթ մտածողության» տեխնոլոգիայի շնորհիվ այսօր մենք կարող ենք ոչ միայն առավել արդյունավետ և դյուրին լուծել գիտելիքների հաղորդման, դրանք գործնական, կյանքում կիրառելի դարձնելու հարցերը, այլև ձևավորել ստեղծագործական մտածողություն, խթանել երեխաների ակտիվությունը, սովորել սովորեցնել, ձևավորել առաջադրված խնդիրների լուծման համար համագործակցելու կարողություններ և իմաստավորել իրենց սեփական մտքերն ու հույզերը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Մարկոսյան Ն.Ռ. «Բազմաբնույթ մտածողության» տեսության կիրառման հնարավորությունները կրտսեր դպրոցում, «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես, 1-2(29), 2005թ., էջ 37-40:
2. Մարկոսյան Ն.Ռ. «Բազմաբնույթ մտածողության» տեսությունը որպես համագործակցային ուսուցման իրականացման արդյունավետ միջոց, «Մխիթար

- Փոշ» գիտամեթոդական հանդես, հասարակական գիտություններ, 3 [7], 2005թ.. էջ 76-78:
3. Մարկոսյան Ն.Ռ. «Հովարդ Գարդների «Բազմաբնույթ մտածողության» տեսության կիրառման հնարավորությունները կրտսեր դպրոցում, «Մանկավարժական կրթություն, հայացք դեպի ապագա» միջազգային գիտաժողովի նյութեր, (Երևան, ՀՊՄՀ, 24-28 հոկտեմբեր, 2006թ.), «Մանկավարժ» հրատ., 2007թ, 423 էջ, էջ 126-128:
 4. Մարկոսյան Ն.Ռ. «Բազմաբնույթ մտածողության» տեսության կիրառումը որպես սովորողների ներքին հնարավորությունների բացահայտման արդյունավետ միջոց, Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, N 3(16), Երիտասարդ գիտնականների II գիտաժողովի նյութեր, ապրիլ 12-14, 2007թ., էջ 163 -166:
 5. Մարկոսյան Ն.Ռ. «Բազմաբնույթ մտածողության» տեսությունը որպես մանկավարժական գործընթացի արդյունավետությանը նպաստող միջոց, Պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 54-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու (նոյեմբեր, 19-21, 2009թ), (Խմբագրական հանձնաժողով): «Մանկավարժ» հրատ., 2010-406 էջ, էջ 88-89:
 6. Մարկոսյան Ն.Ռ. «Բազմաբնույթ մտածողության» տեխնոլոգիայի կիրառման արդյունավետության պայմանները ժամանակակից կրտսեր դպրոցում, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, N6, 2011թ., էջ 32-37:
 7. Մարկոսյան Ն.Ռ. «Բազմաբնույթ մտածողության» տեսությունը որպես անձնակողմնորոշիչ մանկավարժական տեխնոլոգիա, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, N6, 2011թ., էջ 9-14:

МАРКОСЯН НАРИНЕ РУБИКОВНА

ТЕОРИЯ «МНОЖЕСТВЕННОСТИ ИНТЕЛЕКТА» ГОВАРДА ГАРДНЕРА КАК ЭФФЕКТИВНАЯ ТЕХНОЛОГИЯ ОБУЧЕНИЯ В СОВРЕМЕННОЙ НАЧАЛЬНОЙ ШКОЛЕ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 –“Теория и история педагогики”.

Защита диссертации состоится 07.11.2013 в 14:00 на заседании специализированного совета 020 ВАК “Педагогика” по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете имени Х.Абовяна по адресу: 0010, г. Ереван, ул.Тигран Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Внедрение новейших методов активизации и повышения эффективности педагогического процесса является одной из самых главных проблем современной педагогики, требующей неотлагательного решения. С этой целью в образовательный процесс активно внедряются инновационные педагогические технологии, в числе которых особый интерес представляет технология, разработанная на основе теории «множественности интеллекта» профессора Говарда Гарднера Гарвардского Университета США. Будучи эффективной, теория «множественности интеллекта» была внедрена, и стала активно применяться и в системе образования РА.

Рассматривая теорию «множественности интеллекта» в педагогическом процессе с алгоритмической ясностью применяются ряд методов, навыков, технических и других средств, которые дают возможность реализовать разные педагогические цели. В данном контексте теория «множественности интеллекта» нами рассматривается как педагогическая технология.

Рассматривая теорию «множественности интеллекта» как педагогическую технологию, мы ее классифицируем в ряд личностно-ориентированных педагогических технологий, так как она направлена на выявление внутренних возможностей и способностей учащихся, стимулируя их активную поисковую и творческую деятельность.

Применение технологии «множественности интеллекта» в начальной школе даст возможность выявить и развить весь потенциал учащихся и открыть перед ними широкие горизонты для свободного мышления, свободного действия, свободного общения и творчества.

Цель исследования адаптирование теории «множественности интеллекта» Говарда Гарднера как эффективную педагогическую технологию в начальной школе.

Задачи исследования:

- анализировать понятие «педагогическая технология», обеспечить ее современную интерпретацию и обосновать роль педагогической технологии в современном педагогическом процессе.
- Исследовать ряд личностно-ориентированных педагогических технологий, которые посвящены решению современных проблем педагогического процесса.
- Рассмотреть и применить теорию «множественности интеллекта» Говарда Гарднера как личностно-ориентированную педагогическую технологию.
- Экспериментом обосновать эффективность технологии «множественности интеллекта» в современной начальной школе.

Научная новизна исследования.

- Теория «множественности интеллекта» была представлена и применена как личностно-ориентированная педагогическая технология.
- Теория «множественности интеллекта» экспериментом была обоснована как эффективно применяемая личностно-ориентированная педагогическая технология в педагогическом процессе начальной школы.
- Составлены диагностические средства для выявления видов «интеллекта» школьников.

- Экспериментом обосновано целенаправленность нами составленных диагностических средств в повышении продуктивности педагогического процесса.

Теоретическая значимость исследования. Теоретическое значение исследования состоит в том, что были анализированы и классифицированы педагогические технологии. Теория «множественности интеллекта» была подвергнута теоретическому анализу и рассмотрена как личностно-ориентированная педагогическая технология.

Разработанные положения внесут значимый вклад в педагогическую теорию и будут полезными для тех, кто проводит теоретические анализы педагогических технологий.

Практическая значимость исследования. Практическое значение исследования в том, что экспериментом проверенные результаты могут быть полезными для учителей с целью повышения эффективности педагогического процесса.

Предложенные нами диагностические средства могут использоваться педагогами, которые применяют технологию «множественности интеллекта» для обеспечения эффективности учебной деятельности школьников.

Результаты исследования могут применяться в разных сферах педагогики.

Надежность и достоверность результатов исследования обеспечивается теоретическим анализом исследовательского материала. Для этого были использованы комплексные методы, соответствующие исследовательским целям. Была проведена также математическая обработка результатов исследования.

Содержание диссертации. Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложений. Общий объем диссертации 163 компьютерных страниц.

MARKOSYAN NARINE RUBIK

THEORY OF “MULTIPLE INTELLIGENCES” BY HOWARD GARDNER, AS AN EFFECTIVE LEARNING TECHNOLOGY IN THE MODERN PRIMARY SCHOOL

Thesis for getting a candidate degree in pedagogical sciences, specialty 13.00.01 - "Theory and History of Pedagogy."

The thesis defense will be held on 07.11.2013, at 14 00, at the meeting of the Specialized Pedagogical committee 020 HAC for granting scientific degrees at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan.

Address: 0010, Yerevan, Tigran Mets 17.

SUMMARY

The relevance of the research. Today, one of the main issues of pedagogy is to seek and develop new methods to activate and improve the educational process. Today several new teaching technologies are actively engaged in the field of education. Among which is the technology of

Professor Howard Gardner of Harvard University that arouses great interest. It has become a worldwide and it is based on the theory of "Multiple Intelligences".

Armenia could not lag behind global developments and changes of the world. Therefore the theory of "Multiple Intelligences" was quickly included and it was actively used in the education system of Armenia.

Considering the theory of "Multiple Intelligences", a number of techniques, tricks and other technical methods, which give the opportunity to realize different pedagogical objectives, are used with algorithmic clarity in the educational process. From this perspective, we view the theory of "Multiple Intelligences" as a pedagogical technology.

Considering the theory of "Multiple Intelligences" as a technology, we classify it in a number of educational technologies of personal orientation, as it is designed to identify internal capabilities and abilities of children and to ensure them to be encouraged in the active and creative activities.

Application of technology of "Multiple Intelligences" in primary education system will enable to identify and develop the potential of students and open up wider horizons for them: freedom to think, freedom to act, communicate and create.

The aim of the research.

The theory of "Multiple Intelligences" by Howard Gardner is rationale for pedagogical technology, as it contributing to the effectiveness of primary education.

The objectives of the research.

- To analyze the concept of "Educational Technology", give it the modern perception and justify the role of educational technology in the modern pedagogical process.
- To investigate the number of pedagogical technologies of personal orientation, which are devoted to solve current problems of the pedagogical process.
- To observe and apply the theory of "Multiple Intelligences" by Howard Gardner, as a pedagogical technology of personal orientation.
- To validate the effectiveness of the experimental technologies of "Multiple Intelligences" in the modern elementary school.

The scientific novelty of the research.

- The theory of "Multiple Intelligences" was observed and applied as a personal orientation of pedagogical technology.
- The efficiency of applying the theory of "Multiple Intelligences" in a pedagogical process in elementary school was confirmed by an experiment.
- Diagnostic funds have been proposed to identify the type of "Intelligences" of students.
- The appropriateness of the use of diagnostic funds in efficiency of the teaching process was confirmed by experiments.

The theoretical significance of the research. The theoretical value of the study is to analyze and classify pedagogical technology. In addition, the theory of "Multiple Intelligences" has been subjected to theoretical analysis and is considered as a humanistic technology of personal orientation.

Developed applications will contribute to pedagogical theory and will be useful for those who spend a pedagogical process of theoretical analysis.

The practical significance of the research. The practical significance of the study is that it may be useful for primary school teachers as a guide to transform the learning process of primary school.

The proposed diagnostic funds can be used by primary school teachers who use technology of "Multiple Intelligences" for the effectiveness of training activities of school children.

The results can be applied to various fields of pedagogy.

Reliability and validity of the survey results is supported by the theoretical analysis of the research material. For this purpose complex methods corresponding with the research purposes were used, as well as mathematical analysis of research results.

The structure of the research. The thesis consists of an introduction, three chapters, conclusion, list of references and application. The total volume of the theses is 163 computer sheets.